

# Ժողովուրդ

116  
(2596)

9 օգոստոսի երեքշաբթի 2022  
տպագրության ժԱ տարի

ք. Երևան, Արվյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է. ՄԱՍ 64



Աստ ընդդիմադիր պատգամավոր Նիկոլ Փաշինյանի՝ քառօրյա պատերազմն Ադրբեջանը համաձայնեցրած է եղել Ռուսաստանի հետ: Այս մասին նա հայտարարում էր 2016-ի հուլիսի մեկին: «Էդ պատերազմն Ադրբեջանին ԵԱՏՄ մտցնելու մասին էր», - հավելում էր նա: Անդրդիմադիր ժամանակ Փաշինյանը, ի դեպ, միշտ է աչքի ընկել իր հակառակուսակա տրամադրություններով, բայց 2018-ի իշխանափոխությունից հետո մեկ էլ հանկարծ ընդգծված ռուսամետ, ռուսասեր եւ ռուսահպատակ դարձավ: Այսպես, 2018-ի հունիսի 28-ին, երբ նա արդեն վարչապետի պաշտոն էր զբաղեցնում, հայտարարեց հայտարարում էր, թե «հայ-ռուսական հարաբերությունները շատ ակտիվ կերպով զարգանում ու ծավալվում են»: Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների զարգացման մասին նա նաեւ 2018-ի սեպտեմբերի 8-ին Մոսկվա կատարած այցի ժամանակ էր խոսում ասելով. «Շատ երջանիկ եմ, որ այսպիսի մթնոլորտում եմ հայտնվել Մոսկվայում: Հաճելի է շփվել ոչ միայն միջպետական, այլ նաեւ անձնական բնույթի շփում ունենալ (ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ անձնական շփումները նկատի ունեւիր-խմբ.): Այո, իհարկե, մենք փայլուն հարաբերություններ ունենք, ու դրանք գնալով ավելի ու ավելի լավանալու են»: Ստացվում է՝ Նիկոլ Փաշինյանի՝ ՀՀ-ՌԴ հարաբերությունների, ինչպես նաեւ Ապրիլյան պատերազմի մասին հայտարարությունները (դրանցից եւ որեւէ մեկը մինչեւ օրս չի ապացուցվել) սուտ ու կեղծիք են եղել:

Քաջաթաղի շրջանի Աղավնո գյուղի բնակիչները 16 օր ունեն տարածքից դուրս գալու համար: Բանն այն է, որ օգոստոսի 5-ին Քաջաթաղի շրջանի Աղավնո գյուղում Արցախի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանումյանը տեղի բնակչության, համայնքի եւ շրջանի իշխանության ներկայացուցիչների հետ միասին քննարկել է Աղավնոյի, Ներքին Սուսի եւ Բերձորի բնակչության՝ մինչեւ սույն թվականի օգոստոսի 25-ը տարհանման հարցերը քաղաքացիական պաշտպանության պլանի շրջանակներում: Նշենք, որ Աղավնոյի գյուղապետ Անդրանիկ Զավուշյանը դաշնակցական է, իսկ ՀՀ-ն վերջին ամիսներին ակտիվորեն պայքարում է ՀՀ իշխանությունների հեռացման համար, խոսում ՀՀ եւ Արցախի սահմանների անառիկության, Արցախի հայկական մնալու անհրաժեշտության մասին: Ինչպես տեսնում ենք, սակայն, այս օրերին «Դաշնակցություն»-ը լուռ է: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանից պարզել՝ ինչու են նրանք լուռ, սակայն վերջինս վստահեցնում է՝ իրենք բազմիցս են խոսել այդ մասին: «Միայն «Դաշնակցություն»-ն էր խոսում, որտեղ մեկը ոչ մի բան չէր ասում: Ես ինքս անձամբ 2021 թվականի օգոստոսին, երբ խորհրդարանը նոր էր ձեւավորվել, այդ հարցը տվել եմ, դրանից հետո՝ բաց եւ փակ նիստերի ժամանակ: Բացարձակապես լուռ չէինք, սակայն ընդդիմությունն ունի այնքան ուժ եւ կարողություն, ինչքան ձայն ստացել է, եւ որքան մարդ իր հետեւից դուրս է գալիս փողոց: Այն մարդիկ, որոնք ընդդիմության գործունեության նկատմամբ վերապահություն ունեն, թող ասեն՝ երբ ասում էինք՝ երկիրը կործանվում է, իրենք լսեցին՝ ընդդիմությանը», - նկատեց նա: Նա համաձայն չէ, որ կարող էին որեւէ բան անել եւ չեն արել: Չնայած դրան՝ անհասկանալի է, թե դաշնակցական գյուղապետն ինչպես է հանդուրժում Աղավնոյի հանձնումը՝ փաստացի մաս կազմելով հայրենիքի հանձնման գործընթացին: Ոչ գյուղապետ Անդրանիկ Զավուշյանն է հրաժարվում պաշտոնից, ոչ «Դաշնակցություն»-ն է Աղավնոյի հանձնմանը մասնակից կուսակցին հեռացնում կուսակցությունից:



Երբեմնի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ, ԱԺ նախկին պատգամավոր Գեորգ Պետրոսյանի եղբոր՝ Էդգար Պետրոսյանի եւ պարեկների միջադեպի գործով Քննչական կոմիտեն քննարկումների մեջ է. պիտի որոշեն, թե ով է միջադեպի մեղավորը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ պարեկներն ու դատախազը վերջերս առերես հարցաքննվել են, եւ ամեն մեկն իր խոսքն է առաջ տարել: Հիմա գնդակը Քննչական կոմիտեի դաշտում է: Մեզ հասած լուրերի համաձայն՝ այս պահին նախաքննական մարմինը հակված է մեղադրանք առաջադրել պարեկին: Ինչպես հայտնի է, հուլիսի 8-ին նախկին պատգամավորի դատախազ եղբայրը՝ Էդգար Պետրոսյանը, պարեկների հետ բախվել էր: Պարեկները պնդում են, որ դատախազը հայիոյաններ է հնչեցրել, բռնություն է կիրառել, այդ պատճառով են իրենք դատախազին բռնությամբ ձերբակալել: Համացանցում տարածվեց տեսանյութ, որտեղ Էդգար Պետրոսյանը իր տան բակում կանգնած զրուցում է, եւ պարեկները, արցունքաբեր գազ կիրառելով, նրան ձերբակալում են, իսկ ավելի ուշ ազատ արձակում: Այս դեպքով քրեական վարույթ է նախաձեռնվել, եւ բանը հասել է մեղադրանքի փուլին:



Անշարժ գույքի շուկայի ակտիվացմանն ու պահանջարկի ավելացմանը զուգահեռ բարձրանում են նաեւ գույքի գները: Երեւանում բնակարանների գները մեկ ամսվա ընթացքում բավականին բարձրացել են: Մասնագետների կանխատեսումների համաձայն՝ անշարժ գույքի գները չեն նվազելու, այլ ավելի են բարձրանալու: Մյուս կողմից՝ կառուցապատողները զգուշացնում են, որ եթե շինանյութերի գները շարունակեն բարձրանալ, ապա դա կարող է մեծ ազդեցություն ունենալ բնակարանների գների վրա: «Ժողովուրդ» օրաթերթը Կիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ այս տարվա հունիսին, մայիսի համեմատ, բնակարանների թանկացում արձանագրվել է Երևանի բոլոր վարչական շրջաններում: Նշենք, որ Կենտրոն վարչական շրջանում հունիսին բնակարանի մեկ քմ գերազանցում է 1700 դոլարը կամ 744 հազար 100 դրամ է: Ի դեպ, նախորդ տարվա հունիսին Կենտրոնում բնակարանի մեկ քմ-ն 622 հազար դրամ է կազմել, այսինքն՝ մեկ տարվա ընթացքում բնակարանի մեկ քմ-ն թանկացել է 122 հազար 100 դրամով: Բնակարանի այսպիսի թանկացումը մեկ տարվա ընթացքում զգալի է հատկապես Հայաստանի նման երկրում: Արաբկիր վարչական շրջանում բնակարանների գներն ավելացել են 4100, Ավանում՝ 3950 դրամով, Աջափնյակում՝ 2600 դրամով, Մալաթիայում՝ 3900 դրամով, իսկ, ահա, Քանաքեռ-Զեյթունում բնակարանի մեկ քմ-ի գինը բարձրացել է 1000 դրամով: Օրինակ՝ Արաբկիրում հունիսին բնակարանի մեկ քմ-ի արժեքը 526 հազար 600 դրամ է կազմել, իսկ մայիսին՝ 522 հազար 500 դրամ: Բնակարանի մեկ քմ-ի գինը Նուբարաշենում այս տարվա հունիսին արժեքել է 204 հազար 300 դրամ: Անշարժ գույքի շուկայի մասնագետների խոսքերով՝ բնակարան գնողները հիմնականում օգտվում են հիփոթեքային վարկերից:



ԱՐԵՏ Է

«ԱՌԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՆ ՀԱՆՁՆՈՒՄ»

«Ժողովուրդ» օրաթերթի գրուցակիցը ֆաղսագետ Գագիկ Համբարյանն է:

-Պրն Համբարյան, մի քանի օրից Ադրբեջանի վերահսկողության տակ կանցնեն Բերդորն ու Աղավնոն: Արցախի իշխանությունները գյուղի բնակիչներին հրահանգել են տները չհրկիզել, անվասա հանձնել Ադրբեջանին: Ի՞նչ գնահատական կտաք:

-Ինչպես ես կանխատեսվում էր, 2020թ-ի նոյեմբերի 9-ից հետո մենք կապիտուլյացիան կապիտուլյացիայի հետեից ենք տալիս ես ավելի նվաստացուցիչ ես ստորացուցիչ հարվածներ ենք ստանալու: Ինձ համար սա բացարձակ նորություն չի, խնդիրը հետեյալն է, որ իշխանությունները փորձեցին իրենց, հատկապես՝ վարչապետին է սա վերաբերում՝ իր խորամանկությամբ այդ 6 կմ-անոց ճանապարհը չկառուցել, որքան հնարավոր է, ես ունեցանք այն, ինչ ունեցանք: Այսինքն՝ ադրբեջանական կողմը իր պարտականությունները՝ կապված այլընտրանքային ճանապարհի հետ՝ Լաչինի միջանցքի, արել է, այդ 30 կմ-ն կառուցել է, իսկ հայկական կողմը այդ 6 կմ-անոց մասը չի էլ կատարել, ես Հայաստանի վարչապետի պաշտոնը զբաղեցնող կապիտուլյանտը, մի քանի օր առաջ կառավարության նիստին արված հայտարարությունների ժամանակ որեիցե քննարկում այլընտրանքային ճանապարհի ուժեղացման առումով, չի իրականացրել, ես այլընտրանքային ճանապարհի կոնկրետ ստացման պահով կոնկրետ օրեր նշված չեն: Ամեն դեպքում, որքան էլ ռուսական կողմը պարտականություններ ունի վերահսկելու այդ ճանապարհը, միեւնույն ժամանակ, պետք է պարտադիր նշենք, որ առանց հայկական կողմի համաձայնության ճանապարհը թուրքերին չէր հանձնվի: Այստեղ մենք գործ ունենք եռակողմ հակահայկական որոշման եւ դավադրության հետ:



խոսքս, խնդիրներ են ստեղծում, ես Ռուսաստանը, իհարկե, ցանկություն չունի իր ունեցած այլ խնդիրների գումարել նաեւ Արցախի հակամարտության գոտում նոր խնդիրներ եւ գնում է զիջումների: Պաշտոնական Երեւանը բացահայտ կողմ է այդ ամենին, այնպես որ, այստեղ միայն ռուսական կողմին մեղադրելով չէ: Այստեղ գործում է եռակողմ Բաքու-Երեւան-Մոսկվա համաձայնագիր, այդ եռակողմ համաձայնության դեպքում էլ՝ Աղավնոն, Սոսիս եւ Բերդորը հանձնվում են թշնամուն օգոստոսի 25-ին:

-Սոցիալական ցանցերում բացի մեկը մյուսին մեղադրելուց ու լացուկոծ դնելուց որեւէ գործում քայլ չի իրականացվում ո՞չ իշխանության, ո՞չ ընդդիմության, ո՞չ էլ հասարակության այլ զանգվածների կողմից:

-Ինչ վերաբերվում է հասարակությանը, ես կարծում եմ, որ մեր հասարակությունը ամբողջությամբ կորցրել է ինքնապաշտպանվելու բնագործ, ես կարող եմ նշել, թե այսպիսի հասարակությունները, որքան կարող են գոյատևել:

Ես, իհարկե, չեմ ուզում բացարձակ հոռետեսական կարծիքներ տարածել ես

պարտվողականություն փառաբանել, բայց այն, ինչ որ տեղի է ունենում մեզ հետ, աղետ է: Աղետ է, երբ մենք ես մեկ անգամ ցույց տվեցինք, որ մենք ազգ չենք: Սա ժողովուրդ է, որը արհամարհած ունի իր պատմությունը, իր պատմական հայրենիքը: Կարելի է գումարն է, տեղ լինի՝ ման գան, ուրախասան եւ վերջ: Եթե մեր հասարակության ինչ-որ զանգվածի՝ խորհրդային քարտեզները ձեռքների տակ դրած, ասում ես՝ մեր հայրենիքն է, ասում եմ՝ չէ, քարտեզով Ադրբեջանին է, էլ ինչ խոսես դրանց հետ: Այն աստիճանի տգետ են, որ նախկինները 4 տարի է իշխանության չեն, կրկին փորձում են նախկինների վրա այս ամենը բարդել: Որոշ մասը ուղղակի Նիկոլին պաշտպանելու համար ասում է՝ թող նախկինները այդ հարցը լուծեն, Նիկոլը չժառանգեր: Այնքան տգետ են, որ չգիտեն, որ աշխարհի երկրների 80 տոկոսը հարեանների հետ տարածքային խնդիր ունի, եւ աշխարհում միակ ազգը, որ առանց պատերազմի կարող է հանձնել իր պատմական հայրենիքի տարածքները, հայերն են:

Ձրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՅԱՆԸ

ՄՏԱՀՈԳԻՉ ԹՎԵՐ

Հայաստանի ժողովրդագրական վիճակը տարեցտարի ավելի մտահոգիչ է դառնում՝ հակառակ այն բանի, որ իշխանությունները խոստացել էին այն էապես բարելավել: Հայաստանում ծնվածների թիվը բավականին պակասել է: ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ մեր հանրապետությունում, եթե 2021 թվականի հունվար-հունիս ամիսներին ծնվածների թիվը կազմել է 17.249, իսկ այս տարվա 6 ամիսներին այն կազմել է 16.511: Այսինքն՝ ծնվածների թիվը պակասել է 738-ով: Ի դեպ, նշենք, որ այս տարվա հունվար-հունիսին, նորածինների սեռերի հարաբերակցության գործակիցը կազմել է 111.3 տղա՝ 100 աղջկա հաշվով: Այսինքն՝ ծնվող տղաների ու աղջիկների թվի տարբերությունը բավականին մեծ է: Այս դիսբալանսը, ըստ մասնագետների, միջնադարյան տեխնոլոգիաների արագ զարգացման հետևանք կարող է լինել, որոնց միջոցով ծնողները հնարավորություն են ունենում նախապես իմանալ երեխայի սեռը եւ ընդհատել հղիությունն այն դեպքում, երբ ապագա երեխայի սեռը իգական է լինում: Բացի այս, պակասել է նաեւ մեռելածնների թիվը՝ այս տարվա վեց ամիսների ընթացքում 239-ից հասնելով 220-ի: Ի դեպ, տեղեկացնենք, որ 0-1 տարեկան մահվան դեպքերի քանակը այս տարվա 6 ամիսներին կազմել է 121, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ ավելացել է: Իսկ 0-4 տարեկան մահվան դեպքերի քանակը կազմել է 136:

ԿԱՐՈՂ ԵՆ ՀՐԱԺԱՐՎԵԼ

Սովորող ծնողի գրավոր համաձայնության դեպքում կկարողանա օգտագործել հիբրիդային դասագիրքը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ սովորողը, ծնողի գրավոր համաձայնության դեպքում կարող է օգտագործել նաեւ թղթային դասագիրքը կամ դրա թվայնացված տարբերակը, կամ էլ կարող է հրաժարվել թղթային դասագիրքից՝ օգտագործելով էլեկտրոնային կամ հիբրիդ դասագիրք: Նշենք, որ դասագրքի ստեղծման մրցույթին կարող է մասնակցել այն դասագիրքը, որն ունի օգտագործման համար անհրաժեշտ դասագրքի ամբողջական տեսք, պատրաստ է տպագրության համար, եւ մրցույթին է ներկայացված օֆսեթ եղանակով տպագրված ազդարի-նակ նմուշը ու դրա էլեկտրոնային տարբերակը: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դասագրքերի, այդ թվում՝ էլեկտրոնային եւ հիբրիդ դասագրքերի օգտագործման նվազագույն ժամկետը տարրական, միջին եւ ավագ դասարաններում 3-ից մինչեւ 7 տարի է՝ կախված տվյալ առարկայի շաբաթական դասաժամերի քանակից: Նշենք, որ հայաստանյան դպրոցները, հիբրիդային ուսուցման գնացին կորոնավիրուսի համավարակի ժամանակ, երբ հայտարարված արտակարգ դրության ժամանակ դպրոցները երկար ժամանակով փակ մնացին: Սակայն ուսուցիչների մի հատվածի համար հեռավար դասերը որոշ դժվարություններ ստեղծեցին, քանի որ կան տարիքով ուսուցիչներ, որոնք դժվարությամբ են օգտվում նորագույն տեխնոլոգիաներից: Իսկ մի հատվածի համար, թեւ օկայն դասերն արդյունավետ են եղել, բայց շատերը նախընտրում են օֆլայն տարբերակը, քանի որ մարդկային շփումը կորցրել է օկայն դասի ժամանակ:

ՄՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԻՆԾԱՌՎՅՈՂՆԵՐԻՆ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԿՏԱՆ

Այս արվա հուլիսի 1-ից հետո ռազմաուսումնական հաստատություն ընդունված, ավարտած եւ 20 արի ժամկետով դայմանագրային զինվորական ծառայություն անցնելու դայմանագիր կնքած, Հայաստանի Հանրապետության դաճադանության նախարարության համակարգում կամ ՀՀ ազգային անվասնագության ծառայության սահմանադրահ գործերում սղայական դաճոնի նեանակված սղայական կազմի զինծառայողների համար սահմանվել է բնակարանային աղահովության նոր սեակ՝ անհասույց օգագործման իրավունքով դաճաստի ծառայողական բնակարանների հասկացում: Ի դեպ, հասկացման կարգն ու դայմանները սահմանվելու են ՀՀ կառավարության որոշմամբ:

Ի դեպ, պատրաստի բնակարանների ձեռքբերման գործընթացն իրականացվելու է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից, ինչից հետո դրանք ՀՀ կառավարության որոշմամբ՝ հետ վերցնելով կոմիտեից կամրացվեն պաշտպանության նախարարությանը:

ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ զինծառայողին ծառայողական բնակարան հատկացվելու է Երեւանում. հատկացվող բնակարանները պետք է լինեն 75-ից մինչեւ 80 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, վերանորոգված եւ կահավորված վիճակում: Նշենք, որ ծառայողական բնակարանների հատկացումն ապահովելու համար անցկացվելու է վիճակահանություն. արկղում դրվելու են վիճակահանությանը մասնակցող զինծառայողների թվին համապատասխանող թերթիկներ,

որոնցից յուրաքանչյուրում նշվելու է մեկ բնակարանի հասցեն, հարկը եւ համարը: Ավելին՝ ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվելու են պաշտպանության նախարարության միջոցների հաշվին:

Բացի այս, պարզվում է, որ այս որոշման նախագծի ընդունումը ռազմաուսումնական հաստատությունների առնվազն քառամյա կրթական ծրագրի շրջանակներում սկսած 2026 թվականի եւ հետագա տարիների պետական բյուջեներում, առաջացնելու է լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն, որի տարեկան չափը կարող է կազմել մոտ 12,5 մլրդ դրամ:

Ա.Հ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

ԷՐԴՈՂԱՆԸ ԽՈՍԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԵՐԿԱԿԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ



Նիկոլ Փաշինյանի իշխանության օրերին Սեւանա լճի ափին Նոր, շքեղ առանձնատուն է կառուցվում: Ու թեև 33 շրջակա միջավայրի նախարարությունն ու «Սեւան» ազգային պարկը խնամքով թաքցնում են սեփականատիրոջը, «ժողովուրդ» օրաթերթը պարզել է սեփականատիրոջ ով լինելը: Առանձնատան տերը «Կապավոր» ՍՊ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Արման Հակոբջանյանն է՝ Արցախի քաղաքաշինության նախկին նախարարի որդին:

Ի հարկե, 2018-ի նոյեմբերի 29-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր, թե «առաջին պայմաններից մեկը Սեւանը այդ ցանցային ցանկապատերից ազատելն է: Մեկ էլ գնում ես, ափով քայլում ես, տեսնում ես՝ չափառ է դրված, չափառները պետք է մաքրվեն, եւ Սեւանա լիճը պիտի վերադարձվի 33 քաղաքացուն...»: Սակայն ինչպես շատ հարցերում, Փաշինյանը նաեւ այստեղ խաբեց:

Հուլիսի 20-ի համարում «ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի Դրախտիկ գյուղի վարչական տարածքում «Սեւան» ազգային պարկին պատկանող 2060 քմ հողի վրա, 2019 թ.-ից Նոր առանձնատուն է կառուցվում:

Ու թեև Շողակաթ համայնքի ղեկավար Սուլիկո Շուշանյանը Արման Հակոբջանյանին 2019 թ.-ի սեպտեմբերին տրամադրել է նախագծման թույլտվություն, այնուամենայնիվ, քաղաքաշինական Նորմերի խախտումներով է նա կառուցում իր շքեղ առանձնատունը:

Հատկանշական է, որ Հակոբջանյանն իր տունը կառուցում է ճիշտ նույն պայմաններում՝ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի առանձնատան հարեւանությամբ: Ռոմանոս Պետրոսյանը, երբ շրջակա միջավայրի նախարար էր, ակտիվորեն ցանկանում էր քանդել Գասպարյանի առանձնատունը. չհաջողեց: Փաստորեն, Գասպարյանի առանձնատունը քանդել պետք է, բայց Արման Հակոբջանյանին նույն պայմաններում թույլտվություն է տվել հեղափոխական իշխանությունը:

Հավելենք, որ Արման Հակոբջանյանը Արցախում շինարարությունների աշուժի բաժին է իրականացնում, Հայաստանում եւս նա պետությունների մրցույթների ակտիվ հաղթող է եւ ճանապարհներ է նորոգում: Նա ԶԳ-ական պատգամավոր Խաչատուր Սուքիասյանի մտերիմն է, եւ առաջիկայում Հակոբջանյանի արտոնյալ գործունեության մանրամասներին կանդիդատանք:

ՆՅՈՒՆ Է ԶԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Աշխարհում հնարավոր չէ խաղաղություն հաստատել խաղաղության մասին երկրներով: Ակնհայտ է, որ առանց մարտի դաժնում ուժեղ լինելու դժվար է բանակցային սեղանի շուրջ ձեռքբերումներ ունենալ»: Այս մասին ասել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը՝ հավելելով, թե իբր միջազգային համրությունը էական քայլ չի արել Հայաստանի մոտ 30 տարի ճանձ «օկուպացիոն» (չակերտները՝ Tert.am) ֆառաֆակաճության դեմ:

Էրդոհանի խոսքով՝ 44-օրյա պատերազմում Արդբեջանի հաղթանակից հետո «օկուպացիան» ավարտվել է, գրում է posta.com.tr կայքը:

«Մենք քրտնաջան աշխատում ենք, որ պետքի պատմական հնարավորությունը չկորցնենք: Մենք զգալի առաջընթաց ենք գրանցել Կովկասում՝ «կայուն խաղաղության» (չակերտները՝ Tert.am) ուղղությամբ: Մենք շատ կառուցողական գրույց ենք ունեցել Փաշինյանի հետ: Ես հավատում եմ, որ մեր տարածաշրջանը կարճ ժամանակում կկայունանա, եթե Հայաստանը արձագանքի կոչերին», - ասել է Էրդոհանը:

Հիշեցնենք, որ 33 վարչապետը հուլիսին հեռախոսազրույց է ունեցել Էրդոհանի հետ: Սա շուրջ 30 տարի դիվանագիտական հարաբերություններ չունեցող ու փակ սահմաններով ապրող երկու երկրների ղեկավարների առաջին հեռախոսազրույցն էր:

Երկու երկրների ղեկավարներն ընդգծել էին հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի կարեւորությունը, ինչը կնպաստի նաեւ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդմանը, շնորհավորել էին միմյանց՝ Կուրբան Բայրամի եւ Վարդավառի տոների առթիվ:

Երեւանն ու Անկարան նույն հաղորդագրությունն էին տարածել՝ հայտնելով, որ Նիկոլ Փաշինյանն եւ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը շնորհավորել են միմյանց Զուրբան Բայրամի եւ Վարդավառի տոների



առթիվ, ընդգծել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի կարեւորությունը, ինչը կնպաստի տարածաշրջանում խաղաղության եւ կայունության ամրապնդմանը: Երկու երկրների ղեկավարները հույս են հայտնել, որ հուլիսի 1-ին իրենց երկրների հատուկ ներկայացուցիչների հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունները շուտ կյանքի կկոչվեն:

Հայաստանի եւ Թուրքիայի հատուկ բանազնացները վերջին հանդիպման ժամանակ պայմանավորվել էին սահմանը բացել երրորդ երկրների քաղաքացիների համար, ինչպես նաեւ ուղիղ օդային բեռնափոխադրումներ իրականացնել:

Ըստ երկու արտգործնախարարությունների՝ հատուկ ներկայացուցիչները քննարկել են հարաբերությունների լիարժեք կարգավորմանը հասնելու հնարավոր քայլերը՝ ընդգծելով կարգավորման գործընթացն առանց նախապայմանների շարունակելու պայմանավորվածությունը:

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ ցամաքային սահմանը փակ է 1993 թվականից:

Ինչ: Դեռ մարտին Թուրքիայի արտգործնախարարը խոսել էր հայ-թուրքական սահմանի բացումից եւ նշել, որ քննարկվում են տեխնիկական բնույթի հարցեր: Օդային սահմանը վերաբացվեց 1995 թվականին եւ, չնայած փակ ցամաքային սահմանին, Թուրքիան Հայաստանի հիմնական առեւտրային գործընկերներից մեկն է: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ անցած տարի երկկողմ առեւտուրը կազմել է 73,5 միլիոն դոլար:

Հատուկ բանազնացներ Ռուբեն Ռուբինյանը եւ Սերոբար Քըլբըջը չորրորդ անգամ են հանդիպում: Ավելի քան կես տարի ընթացող բանակցությունների միակ առարկայական արդյունքը, մինչ այժմ, երկու երկրների միջեւ ուղիղ ավիահաղորդակցության վերականգնումն էր, որը դադարել էր 2019-ի վերջին:

Հայ-թուրքական կարգավորման գործընթացը առարկայական փուլ մտավ անցած տարեվերջին, երբ կողմերը բանակցություններ սկսելու համար հատուկ ներկայացուցիչներ նշանակեցին:

ՆԱԽՈՒ ԶՈՒՅԱՆՆԻՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԳՐԵՋԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԸ ՄԵՂՄՈՒՄ ԵՆ

Արդբեջանի՝ այս փուլի համար նախանշած քաղաքական պահանջները 33 իշխանությունները հրատապ կերպով իրականացրեցին, իսկ ռազմական առումով՝ ադրբեջանական զորքերը վերադասավորումներ/վերադիրքավորումներ իրականացնելով Արցախի ուղղությամբ, սեղմում են օդակը, մեծացնում ճնշումը: Այս մասին հայտնել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը: «Մեկ շաբաթ է՝ բոլոր մանրամասներով ուսումնասիրում եմ ադրբեջանական վերջին ագրեսիայի դրդապատճառները: Ե՛վ քաղաքական, ե՛ւ ռազմական, ե՛ւ ռեզոնանսային տեսանկյունից, դետալային, հաշվարկված օպերացիա էր: Ադրբեջանի՝ այս փուլի համար նախանշած քաղաքական պահանջները 33 իշխանությունները հրատապ կերպով իրականացրեցին, իսկ ռազմական առումով՝ ադրբեջանական զորքերը վերադասավորումներ/վերադիրքավորումներ իրականացնելով Արցախի ուղղությամբ, սեղմում են օդակը, մեծացնում ճնշումը: Ստեղծված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում Հայաստանի իշխանությունը գործելու, քայլ անելու հնարավորություն այլեւս չունի, եթե նույնիսկ ինչ-ինչ հրաշ-

քով, նման ցանկություն առաջանար», - գրել է նա:

ՆԱԽԱԶԳՈՒՆՑՄՆՈՒՄ ԵՆ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլյութ Չավուշօղլուն որոշել է «նախագուշակել» Հայաստանին՝ «հետագա սադրանքների անթույլատրելիության» մասին: «Մենք մեկ անգամ եւս նախագուշակեցինք եւս Հայաստանին, որ պետքի ջնամանակի Նոր սադրանքների», - ասել է նա՝ ելույթ ունենալով Անկարայում Թուրքիայի դեսպանների 13-րդ համաժողովում: «Մենք կասկածի տակ ենք դրել «սառնեցված հակամարտություն» տերմինը՝ հիշեցնելով, որ սառույցների հալվելը նշանակում է հակամարտություն՝ ցանկացած պահի», - նշել է նա: Չավուշօղլուն հավաստիացրել է, որ Արցախի դեմ ադրբեջանական ագրեսիայից հետո Թուրքիան «դիմել է տարածաշրջանային խաղաղության ջանքերի»: «Այսպիսով, մենք այսօր խոսում ենք տարածաշրջանային խաղաղության եւ համագործակցության, այլ ոչ թե օկուպացված հողերի, տեղահանված անձանց, փախստական միգրանտների եւ հակամարտության մասին: Անկարան շարունակում է Հարավային Կովկասում խաղաղության եւ կայունության ապահովման, համագործակցության մթնոլորտի ձեւավորման ջանքերը: Մենք

Նորից նախագուշակեցինք եւս Հայաստանին՝ հետագա սադրանքների անթույլատրելիության մասին», - ասել է նա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովին է ներկայացրել Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ: Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկությունները մշակվել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մասնագիտական շրջանակների հետ քննարկումների ու մասնագիտական վերլուծությունների արդյունքում: Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունների մեջ հատուկ տեղ են զբաղեցնում «Մարդու իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից 2021թ. իրականացված թեմատիկ հետազոտությամբ վերհանված առաջարկությունները: Պաշտպանը ներկայացվող առաջարկությունները գրավոր ընթացակարգով քննարկման գործընթաց է իրականացնում նաեւ Պաշտպանին առընթեր խորհուրդների հետ եւ շարունակելու է այս թեմայով քննարկումները՝ ներառյալ միջազգային մասնագիտացված կազմակերպությունների հետ բարեփոխումների գործընթացի ամբողջ ընթացքում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՌԵՎԱՆՉԱՄԱՆ ՍՊԱՌՆԱԿԻՔ

ՊԱՐՏՔԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՎԵՐՋ Է ՑՎԵԼ ԿՅԱՆՔԻՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ա.Տիգրանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վաճառքի արդյունքում Գյումրի քաղաքի բնակիչ Հայկ Յուրիկի Ենգոյանից ունենալով 2.200 ԱՄՆ դոլար գումարալին դառնալով, 2020 թվականի փետրվարի 18-ին, ազգականի՝ Եղիշե Կոլյայի Տիգրանյանի հետ այցելել է Գյումրի քաղաքի Չկալով փողոցի 1-ին հասցեում գործող «Գյումրի քաղաք» կոչվող շինություն, որտեղ հանդիպել է Հայկ Ենգոյանին և վերջինիս ազգական Արսյուն Կիրակոսյանին, ապա Հայկ Ենգոյանից դառնալով է մարել դարձվածքները, որի կառավարությանը վերջինս դարձավորվել է Արսյուն Կիրակոսյանի միջոցով 2020 թվականի փետրվարի 25-ին հիշյալ դարձվածք մարել 460 ԱՄՆ դոլար գումար, իսկ մնացած մասը՝ 4 ամսվա ընթացքում:



Այնուհետև՝ 2020 թվականի փետրվարի 26-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, «Գյումրի քաղաք» կոչվող շինությունում եղիշե Տիգրանյանի հետ միասին հանդիպել են Հայկ Ենգոյանին և Արսյուն Կիրակոսյանին, որի ընթացքում, ինքը եւ եղիշե Տիգրանյանը Արսյուն Կիրակոսյանի, ինչպես նաեւ Գյումրի քաղաքի բնակիչներ Արմեն Մուսյանի և Վազգեն Ղուկասյանի ներկայությամբ նշված հարցի շուրջ առաջացած վիճաբանության ընթացքում, նվաստացնելով և ոտնահարելով Հայկ Ենգոյանի պատիվն ու արժանապատվությունը, սեռական բնույթի բազմաթիվ հայտյանքներ են հնչեցրել վերջինի հասցեին, ինչին, սակայն, Հայկ Ենգոյանը չի հակադրվել՝ գնվելով հոգեբանորեն ճնշված վիճակում: Միաժամանակ՝ իր իրական իրավունքներն ինքնակամ իրականացնելով, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությունով նախատեսված դրամական պարտավորությունների վերադարձի համար սահմանված կարգի խախտմամբ, պարտք եղած գումարը Հայկ Ենգոյանից ստանալու նպատակով, բռնություն է գործադրել նրա նկատմամբ՝ ձեռքերով շուրջ 6-7 անգամ հարվածներ է հասցրել վերջինի դեմքի հատվածին՝ պատճառելով ծախվերհոնքային, ծախականջախեցու, քթի, աջ թեւի եւ ծախ

ականջախեցու բլթակի արյունազեղման ձեւերով՝ առողջությանը թեթեւ վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ. ապա իրական իրավունքներն ինքնակամ իրականացնելով վերը նշված դիտավորությամբ, Հայկ Ենգոյանին սպառնացել է գումարը նշված ժամանակահատվածում չվերադարձնելու դեպքում Հ. Ենգոյանի ազգական Արսյուն Կիրակոսյանի կյանքի եւ առողջության համար գործադրել բռնություն, առեւտրել վերջինիս, որից հետո նրանք հեռացել են այդտեղից՝ ներկայացնելով պահանջ՝ մինչեւ նույն օրվա ժամը 00-ն վերա-

դարձնել գումարը, այդ կերպ փորձելով Հայկ Ենգոյանին պատճառել էական վնաս, այն է՝ իր իրական իրավունքները օրենքի խախտմամբ իրացնելու եղանակով ստիպել է Հայկ Ենգոյանին իրենց տալ 2.200 ԱՄՆ դոլլար գումարը, որպիսի պայմաններում վերջինս կհայտնվեր ֆինանսական ծանր դրության մեջ: Ինչը, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով, ավարտին չի հասցվել, քանի որ նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, Հայկ Ենգոյանը ինքնասպանություն է գործել:

Ջ.Ս.

ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում քրեական վարույթ է նախաձեռնվել՝ օգոստոսի 6-ին Երեւանում տեղի ունեցած սպանության հատկանիշներով: Այդ օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն տեղեկություններ են ստացվել, որ Շիրակի փողոցի 2/Ա շենքի բնակարաններից մեկում դիկա: Պարզվել է, որ նույն օրը վիճաբանություն է տեղի ունեցել նշված հասցեի բնակիչ 48-ամյա Արման Ե-ի և 74-ամյա Վարդան Ե-ի միջեւ, որի ժամանակ, Արման Ե-ն իրել է Վարդան Ե-ին, ով վայր ընկնելու հետեւանքով՝ գլուխը հարվածել է բազմոցին և տեղում մահացել: Հարթանակ թաղամասում հայտնաբերվել է Արման Ե-ն և սպանության կասկածանքով տեղափոխ-

վել ոստիկանության բաժին: Աղբյուրի տեղեկություններով՝ ձերբակալվածը մահացածի որդին է:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Ինչպես հայտնի է, ՀՀ ՊՆ-ն պարբերաբար հայտարարում է եռամսյա վարժական հավաքների մասին: Արդյունքում եղել էին անձինք, որոնք հրաժարվել էին վարժական հավաքներին մասնակցելուց, իսկ որոշ դեպքեր էլ եղել էին, որ մասնակցել էին, իսկ որոշ ժամանակ անց լքել էին գործարար, որտեղ անցկացվել էր եռամսյա վարժական հավաքները: Եվ, ահա, դատարանը հրապարակել է առաջին վճիռը՝ վարժական հավաքներից խուսափած անձանց մասով: Մ. Մալուխյանին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա խուսափել էր

մասնակցել 2021 թվականի սեպտեմբերի 15-ից մինչեւ դեկտեմբերի 15-ը անցկացվող վարժական հավաքներին՝ դրանից ազատվելու հիմքերի բացակայության դեպքում: Արդյունքում այս տարվա հունիսի 17-ին դատարանը վճիռ է հրապարակել Մ.Մալուխյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ կարճաժամկետ ազատազրկում՝ 2 /երկու/ ամիս ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ համաձայնեցված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանել փորձաշրջան 2 /երկու/ տարի ժամկետով, որպես պարտականություն սահմանել նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ առանց դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի համաձայնության՝ չլքել Հայաստանի Հանրապետության տարածքը:

ԼՈՒՐԵՐ

ՁԵՐԲԱԿԱԿԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում ձեռնարկված վարույթային եւ քննչական անհրաժեշտ գործողությունների արդյունքում բացահայտվել է քաղցրավենիքների խանութի աշխատակցուհու նկատմամբ կատարված ավազակության դեպքը: Դեպքի վերաբերյալ հարգորդումը ստացվել է 2022թ. օգոստոսի 7-ին, ըստ որի՝ նախօրեին անհայտ անձը, թղթե տոպրակ վերցնելու պատրվակով, մուտք է գործել Երեւան քաղաքի Հյուսիսային պողոտայում գործող քաղցրավենիքների խանութ եւ աշխատակցուհու նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով՝ հափշտակել դրամարկղում առկա, նախնական տվյալներով, 540.000 ՀՀ դրամ գումարն ու դիմել փախուստի: ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակներում կատարվել է դեպքի վայրի զննություն, վերցվել են խանութի սրահը տեսանկարահանող սարքի տեսագրությունները: Աշխատակցուհին ճանաչվել է տուժող եւ հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ:

Ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը պարզվել է. նա Երեւանի 34-ամյա բնակիչ է: Վերջինս հայտնաբերվել է, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, ձերբակալվել և ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Կատարվում է նախաքննություն:

ՀԻՎԱՆԳԱՆՈՑՈՒՄ Է

Առողջական վիճակի սրացումից շուրջ մեկ ամիս անց Քաղաքաշինության կոմիտեի նախկին նախագահ Վահագն Վերմիշյանը բերվել է Էրեբունի ԲԿ: Այս մասին հայտնել է Վերմիշյանի պաշտպան Ալեքսանդր Կոչուբաբեցի: Նա նշել է, որ մանրամասները կլինեն հետազոտություններից հետո:

Հիշեցնենք, որ Վահագն Վերմիշյանի ինքնազգացողությունը վատացել էր դատական նիստերի դադարում: Դեպքը տեղի էր ունեցել նիստի մեկնարկից կարճ ժամանակ անց: Վերմիշյանը դատավարության կողմերին կոչ էր արել մեկ րոպե լռությամբ հարգել պրոպյուստեր Արմեն Գրիգորյանի հիշատակը, որը տասն օր առաջ, հիշեցնենք, հանկարծամահ էր եղել նույն դադարում Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոն նստավայրում: Նիստը նախագահող դատավոր Մնացական Մարտիրոսյանն այդ քայլը համարել էր դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, որոշել էր դատական սանկցիա կիրառել Վերմիշյանի նկատմամբ եւ նիստերի դադարից տասը ժամով նրան հեռացնելու որոշում կայացրել: Վերմիշյանը դատավորի պահվածքից վրդովվել էր ու նրա ինքնազգացողությունը վատացել էր: Վերմիշյանին, սակայն, հիվանդանոց չէին տեղափոխել:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 5-ից 8-ը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը բացահայտել է հանցագործության 102 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎԱԶԵԼ Է

Հայաստանի պետական վիճակագրության կոմիտեն հրապարակել է Հայաստանի բնակչության մասին տվյալներ, ըստ որի՝ 2022թ. հուլիսի 1-ի դրությամբ Տավուշի մարզի բնակչության քանակը 119 հազար 500 է, որից 49 հազար 700 մարդը՝ քաղաքային, 69,8-ը՝ գյուղական բնակչություն:

2021թ. հուլիսի 1-ի դրությամբ Տավուշի մարզի բնակչությունը 119 հազար 900 էր, որից 50 հազար 100-ը՝ քաղաքային, 69 հազար 800-ը՝ գյուղական բնակչություն: Անցած մեկ տարում՝ 2021թ. հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը Տավուշի մարզի բնակչությունը նվազել է 400 մարդով, որոնք եղել են մարզի քաղաքների բնակիչներ: 1996թ. փետրվարի 18-ին, երբ կազմավորվեց Տավուշի մարզը, մարզի բնակչության թիվը 134.100 էր: Այսինքն՝ անցած 26 տարում Տավուշի մարզը 14 հազար 600 մարդ, մարզի երկու քաղաքի՝ Նոյեմբերյանի և Բերդի ընդհանուր թվով բնակչության, կամ Տավուշի մարզի միջին չափի բնակչություն ունեցող 14 գյուղի կորուստ է ունեցել:

Սահմանամերձ, սոցիալական մեծ խնդիրներ ունեցող մարզի բնակչության նվազման հիմնական պատճառը՝ մարզի բնակավայրերում մահվան դեպքերի մեծ թիվը է: Ծնունդների համեմատաբար փոքր քանակն է և արտագաղթը: Տավուշի մարզից հիմնականում գաղթել են Ռուսաստան, փոքր չափով՝ ներքին միգրացիա է եղել, այսինքն՝ սահմանամերձ գյուղերից տեղափոխվել են Երեւան կամ Հայաստանի այլ բնակավայրեր: Երեք տարի առաջ մայիսի 9-ին Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում բնակվող բարեկամականացիները միասին տոնել են Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի տոնը, այդ քեֆին մասնակցել է մոտ 200 բարեկամականացի:

Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքի հեռավոր, սահմանամերձ Բարեկամական գյուղում այժմ փաստացի բնակվում է նույնքան՝ մոտ 200 մարդ: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից մեծ արտագաղթ եղել, ոսկեպարցիները հիմնականում բնակվում են Բոլզորոզի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում, Վորոնեժում, Կուրսկում և այլուր: Ոսկեպարցիները համահավաք ապրում են Ստարի Օսկոլ քաղաքում, որին կատակով Նուլի Ոսկեպար են կոչում: Արտագաղթը մեծ է եղել նաև Բերդ համայնքի բնակավայրերում, հատկապես՝ սահմանամերձ Մովսես գյուղում, որի շատ բնակիչներ հաստատվել են Մոսկվայում և այնտեղ գործարարությամբ են զբաղվում: Մոսկվայում ռուսական հանրակրթական դպրոցներ կան, որտեղ դասարանների աշակերտների մեծ մասը Մովսեսից գաղթածների երեխաներն են: Արտագաղթը ցայտուն է երևում Տավուշի մարզի սահմանամերձ, փոքր գյուղերում, որոնցում թաղեր կան, ուր երեկոները տներից մեկ-երկուսում է լույս վառվում, այնտեղ էլ հիմնականում ծերեր են մնացել:

ՈՍԿԵՍ ՍՈՐՈՍՅԱՆ  
Տավուշ

ՊԱՐԱՆՁ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ ԴԵՄՊԱՆԱՏԱՆ ՄՈՏ

«Արցախում սիրող իրավիճակն աղացուցում է, որ Արցախը դեֆ Է հայաթափվի»: Այս մասին ասաց ԱՄՆ դեսպանասան մոտ բողոքի ակցիա իրականացնող «Հանուն Հայրուրի» ՀԿ նախագահ Լեւոն Հայրյանը: Նրա խոսքով՝ իրենց դիմում են Միջին խմբի համաձայնագրի ղեկավարներին, որոնցից նրանք կասարեն այն դաժարությունները, որոնք ստանձնել են: Հայրյանը հավելեց, որ 1994 թվականի դաժարագրով կանգնեցվեց Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջնորդությամբ, դաժարագրի դադարից հետո Միջին խմբի համաձայնագրի երեք ղեկավարները ասել են, որ Արցախի հարցը դաժարագրական լուծում չունի, սակայն 2020 թվականի դաժարագրով այլ բան ցույց չվեց:

Լեւոն Հայրյանը ընդգծեց, որ Հայաստանի իշխանությունները պատերազմից հետո անընդհատ մեղադրանքներ են հնչեցնում միմյանց հասցեին, թե ով է մեղավոր Հայրուրիի և Շուշիի հանձնման համար:

«Ով հիմա հանձնում է Աղավուն, Բերդորը, նա էլ հանձնել է Հայրուրը և Շուշին: Պարզապես պատերազմը հնարավորություն տվեց ծածկադմից անել, իսկ հիմա պատերազմ չկա, չեն կարողանում ծածկադմից անել: Պարզապես հիմա նրանց չիտվիկներից մեկը՝ Հայկ Խաչատրյանն անուով, գնացել է Աղավուն և Բերդոր և ասել է, որ ժողովուրդը դուրս գա տներից: Մարդկանց մեծ մասը ցուցկադմ է դուրս գալուց առաջ այրել իրենց տները, բայց այդ չիտվիկը ասել է՝ չհամարձակվեք այրել, եթե այրեք, փոխհատուցում չենք տա»,- ասաց նա:

Երեւանում գտնվող արցախցիների կրոնավեցրել է այն, որ Արցախի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Հայկ Խաչատրյանը կոչ է արել միջազգային կառույցներին չօգնել Երեւանում ապաստանած Արցախցիներին այնքան ժամանակ, մինչև նրանք չվերադառնան Արցախ:



«Սա ասում են նրանք, ովքեր պետական քաղաքականությամբ մանր-մանր հայաթափում են Արցախը: Ու՛ր է Ղարաբաղը, քարտեզի վրա ցույց տվե՛ք տեսնեմ, ու՛ր է այն: Հենց Ղարաբաղում ազատագրական պայքար սկսի, մեզ չեք տեսնի, մեր պայքարը մենք կշարունակենք այնտեղ»,- ասաց նա:

Լեւոն Հայրյանը ներկայացրեց այն պահանջները, որով իրենք եկել են ԱՄՆ դեսպանատան մոտ:

«Մեր պահանջը այն է, որ վերականգնեն Արցախի Հանրապետության 1994 թվականի սահմանները, նոր դրանից հետո բանակցային ճանապարհով հարցերը լուծեն: ԱՄՆ-ին ուղղված նամակում՝ նախ, մենք անդրադարձել ենք ամենակարևոր փաստին. մենք գրել ենք, որ Արցախում կատարվում են անմարդկային անարդարություններ, և Ամերիկան, որպես ժողովրդավարության դրոշակակիր, իրավունք չունի անտարբեր լինել: Մենք ԱՄՆ-ին շնորհակալություն ենք հայտնել այս տարիներին Հայաստանին օգնելու համար: Ես խոսել եմ նաև փախստականների մասին: Հիմա փախստականների վիճակն անմխիթար է»,- ասաց Լեւոն Հայրյանը:

Նշենք, որ այսօր Արցախից տեղահանվածները բողոքի ակցիա էին իրականացնում ԱՄՆ դեսպանատան մոտ: Դեսպանատան դիմաց հավաքված արցախցիներն իրենց պահանջը նամակով փոխանցել են ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լին Թրեյսին:

Այսօր նրանք այցելելու են նաև ՀՀ-ում ՄԱԿ-ի գրասենյակ՝ ներկայացնելով իրենց գրավոր պահանջը՝ երաշխավորել Արցախի ու արցախցիների անվտանգությունը:

Հիշեցնենք, որ օգոստոսի 6-ին, Արցախից տեղահանվածները բողոքի ակցիա էին իրականացրել ՀՀ-ում ՌԴ դեսպանատան դիմաց: Դեսպանատան դիմաց հավաքված արցախցիներն իրենց պահանջը նամակով փոխանցել են ՀՀ-ում ՌԴ դեսպան Սերգեյ Կոպիրկինին:

Ն. Հ.

ԼՈՒՐԵՐ

683 ԱՐԱԶԱՆԳ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Օգոստոսի 1-ից 7-ը ընկած ժամանակահատվածում ԱԻ պետական ծառայության 911 ահազանգման կենտրոնում գրանցվել է 683 ահազանգ, որից 624-ը՝ ճանաչողական բնույթի: Այս մասին հայտնում են ՆԳՆ ԱԻ պետական ծառայությունից: Ծառայության ընթացքում գրանցվել է բնածին բնույթի 6, տեխնածին՝ 14 և սոցիալ-կենցաղային բնույթի՝ 14 կանչ: Գրանցված 6 հրդեհի դեպքերը արձանագրվել են չոր խոտատարածքներում: Ծառայության կենտրոնական ու շրջանային ստորաբաժանումները և հրշեջ հենակետերում տեղակայված մարտական հաշվարկները օպերատիվորեն հակազդել ու անհրաժեշտ մակարդակով իրականացրել են հրդեհաշիջման աշխատանքներ: ԱԻ պետական ծառայությունը հորդորում է խստագույնս պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները, մասնավորապես՝ չոր խոտատարածքներում ու այգիներում, «Մեր իսկ պատասխանատվությամբ նվազեցնենք հնարավոր արտակարգ պատահարների առաջացման ռիսկերը»:

Հաշվետու ժամանակահատվածում փրկարարները կատարել են փակված 5 դռան և 2 վերելակի բացում, փրկարարների օգնությամբ 2 քաղաքացի տեղափոխվել է համապատասխան բժշկական հաստատություններ, բնակչությանը ջուր մատակարարելու նպատակով կատարվել է 1 ելք, փրկարարներն արձագանքել են այլ բնույթի եւս 4 կանչերի:

Օձի հայտնաբերման վերաբերյալ շաբաթվա ընթացքում ստացվել է 2 ահազանգ: Հերթապահ օպերատիվ խմբերը բնակչությանը ցուցաբերել են անհրաժեշտ օգնություն՝ թունավոր սողունների տեղափոխելով անվտանգ տարածք: Հանրապետության տարածքը հավանական սպառնալիքներից մաքրելու և շրջակա միջավայրն ավելի անվտանգ դարձնելու նպատակով՝ ԱԻ պետական ծառայության սակրավորական խմբերը, գործընկեր կառույցների հետ մեկտեղ իրականացրել են չպայթած զինամթերքի հայտնաբերման և վնասագրեթման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ վնասագրեթմվել է 121 պայթուցիչ, 2 հրթիռ, ականանետի 74 ական, 282 արկ և գնդիկաբեկորային 5 ավիառումբ:

5-6 ԱՍՏԻՃԱՆՈՎ ԿԵԱՐԶՐԱՆԱ

Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի նախալեռներում և Արարատյան դաշտում բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակը կպահպանվի:

Օդի ջերմաստիճանն օգոստոսի 9-13-ն աստիճանաբար կբարձրանա՝ 5-6 աստիճանով: Երեւանի առանձին հատվածներում օգոստոսի 8-ին երեկոյան ժամերին սպասվում է կարճատև անձրև և ամպրոպ: Օգոստոսի 9-13-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Երեկոյան ժամերին և ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում՝ 15-20մ/վ արագությամբ: Շրջանների զգալի մասում օգոստոսի 8-ին, օգոստոսի 9-ին, 10-ի գիշերն առանձին շրջաններում կտեղա կարճատև անձրև և ամպրոպ, առանձին հատվածներում կարկուտ:

Օգոստոսի 10-ի ցերեկը, 11-13-ը կդիտվի առանց տեղումների եղանակ: Քամին՝ հյուսիսարևելյան 2-5մ/վ: Երեկոյան ժամերին և ամպրոպի ժամանակ սպասվում է քամու ուժգնացում 15-20մ/վ:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 35 ճՏՊ. 52 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

## ՄՈՅԻՆԱԿԱՆ

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՅ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2022թ. օգոստոսի 17-ին ժամը 14:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի շենքում տեղի կունենան «ԿՊՊԵՐ ՍՈԼՅՈՒՇԻՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Տիգրանաբերդի բազմամետաղների հանքերու-ակման տեղամասում 2022-2025թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին փուլ/:

#### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

«ՊԵՐԼԱՐՈ ԼՈԿԱԼ ԻՆՎԵՍՏԵՆՑ» ՓԲԸ-ի նկատմամբ լուծարման վարույթ սկսելու մասին հայտարարություն: ՀՀ սնանկության դատարանի 29.07.2022 թ. որոշմամբ՝ սկսվել է «ՊԵՐԼԱՐՈ ԼՈԿԱԼ ԻՆՎԵՍՏԵՆՑ» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Երեւան, Մաշտոցի 422., քն 4, ՀՎՀՀ՝ 02588751, գրանցման համար՝ 286.120.06814) լուծարման վարույթ: Սնանկության գործով կառավարիչ՝ Էդուարդ Սերոբյան: Հեռ՝ +374-77-64-22-00:

#### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կրճատորի կազմակերպման և անցկացման մասին 2022թ. օգոստոսի 02-ին ժամը 11:00-ին ք. Երեւան, Սրբաբանակյան պողոտա 5, 311 սենյակ հասցեում նշանակված Ա/2 Հրայր Կարապետյանի պարտավորությունների կտարանման պահովման նպատակով «Հայրիկ-Ներսիս» ՓԲԸ-ում գրավարկված, պարտապահին պատկանող անշարժ գույքի աճուրդը չի կայացել՝ հայտեր չկիսելու պատճառով:

Ըստ արվճ 2022թ. օգոստոսի 22-ին ժամը 11:00-ին ք. Երեւան, Սրբաբանակյան պողոտա 5, 311 սենյակ հասցեում կանցկացված ստորեւ նշված նկարագրին համապատասխան անշարժ գույքի աճուրդը, բաց դասական եղանակով: Գույքն իրենից ներկայացնում է՝

Լոտ 1 - Պարտապահի պարտավորությունների պահովման նպատակով «Հայրիկ-Ներսիս» ՓԲԸ-ում գրավարկված ՀՀ, ք. Նոր Հաճն, Թումանյան փ. 2 հասցի արտադրման հասցեում գտնվող անշարժ գույքը (սեփականության վկայական թիվ 1085642, Կարգատրային համար՝ 0032-0006, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, մակերեսի չափերը՝ 664,3 կարգական շենք, 344քմ. արտադրամաս, 139,8 քմ. արտադրամաս, 36քմ. պահակատուն, 10,2քմ. Պարիսպ, իրոցմասի մակերեսի չափը՝ 2205 քմ., գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, սեփականության վկայականի լրացուցիչ նշումներ բաժնում նշված է, որ հորսմասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ 04.10.2005թ. թիվ 199-Ն օրենքի 23 հոդվածի պահանջների համաձայն՝ պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող իրականացնող կառավարչին արժեքի վճարման անդորրագրից ներկայացնելու դեպքում):

Լոտի մեկնարկային արժեքը կազմում է 43,817,256 ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում են, որ գնորդը կրելու է գույքի նորարարական վավերացման, պայմանագրից բխող իրավունքների պետական գրանցման և վտարման հետ կապված ծախսերը:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի՝ Ա/2-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը, - աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթուղթը:

Մասնակցության վճարը և նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար՝ 1% է 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը վճարվում է անկասկի վիճակում՝ Ա/2 Հրայր Կարապետյանի սնանկության հատուկ հաշվին՝ «Այրի Բանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 11817076066400 հաշվեհամարին մինչև հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները աճուրդի անցկացման օրվան նախորդող 5 օրվա ընթացքում ընդհուպ մինչև՝ աճուրդին նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարանի /հասցեն՝ ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդում հարցեր է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լուրս ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգի ծանուցանալ դիմելով կառավարիչ՝ Վ. Հարությունյանին (հեռ. 095 110 216 /այլ թվում՝ Viber, WhatsApp):

### ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

«Բի ե թ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Այստ» ԱԳ Բորսայի հարթավում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացման), այսուհետեւ «իրականական» (գնի նվազեցման) եղանակներով: Աճուրդի ընթացքում կաճանակելու են «Արդշինքան» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը:

- Արմավիրի մարզ, համայնք Վարդաշապատ ք., Իսակովի փողոց, 29/11 հասցեում գտնվող 78,9 քմ. բնակարան (առկա է ընդհանուր մուտք՝ 18,2 քմ.): Լոտի մեկնարկային գինը՝ 12700000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Արուսյան ք., Ռարսի փողոց, 3 շենք, 36 հասցեում գտնվող 43,85 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14200000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Գորիս, Գորիս ք., 6-րդ թաղամաս, 4 շենք, 10 հասցեում գտնվող 80,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15030000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վարդաշապատ ք., Վազգեն Սոսոյանի փողոց, 48ա շենք, 33 հասցեում գտնվող 60 քմ. բնակարան և 25,8 քմ. ինքնակամ կառուցված շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 12600000 ՀՀ դրամ:

- Արմավիրի մարզ, համայնք Վարդաշապատ ք., Սուրբ Ս. Խորենացու փողոց, 21 հասցեում գտնվող 158,8 քմ. բնակելի տուն, 2,7 քմ. կաթասպառում և 0,0358 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16300000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Էրեբունի, Էրեբունու փողոց, 3 շենք, 11 հասցեում գտնվող 30,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14040000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Նոր Հաճն ք., Պարգեւաշեն 1-ին թաղամաս, 1-ին փողոց, 24/1 հասցեում գտնվող 41,77 քմ. սպասարկման օբյեկտ և 0,01 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 13000000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Արուսյան ք., Սարախանցի փողոց, 8ա շենք, 10 հասցեում գտնվող 75,8 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19300000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան ք., Վ. Սարգսյան փողոց, 26 շենք, 59 հասցեում գտնվող 61,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Բալասիոխի, 6-րդ փողոց, 1/1 հասցեում գտնվող 343,75 քմ. բնակելի տուն, 1,5 քմ. սանհանգույց, 21,1 քմ. անասնաշենք, 1,4 քմ. /2,52 հա./ պարիսպ և 0,086 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 34600000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Ալաբաթ, Ալաբաթ ք., Գ.Նուսանկերցի փողոց, 23 հասցեում գտնվող 365,52 քմ. բնակելի տուն և 0,119 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21360000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Ալաբաթ, Ալաբաթ ք., Մ.Բարսեղյան փողոց, 119 հասցեում գտնվող 100,42 քմ. բնակելի տուն, 74,72 քմ. հացատուն և 0,069 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12500000 ՀՀ դրամ:

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Մեքենակարների փողոց, 35 հասցեում գտնվող 182,49 քմ. բնակելի տուն, 9,77 քմ. օժտարկա շինություն, 1,66 քմ. /3,49 հա./ պարիսպ, 3,13 քմ. /5,63 հա./ պարիսպ և 0,044651 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 9630000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Կոպեթակի փողոց, 6 շենք, 27 հասցեում գտնվող 92,2 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34500000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 7-րդ թաղամաս, 4 շենք, 4 հասցեում գտնվող 66,7 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9600000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մայրաքաղաք-Սեբաստիա, Հաղթանակի 4-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 241,3 քմ. բնակելի տուն և 0,0407 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 44350000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Թումանյան փողոց, 1 շենք, 21 հասցեում գտնվող 68,78 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9130000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արարատ ք., Արուսյան փողոց, 3 շենք, 17 հասցեում գտնվող 56,97 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 11200000 ՀՀ դրամ:

- Երևանի մարզ, համայնք Արթուր ք., Արուսյան փողոց, 5 շենք, 44 հասցեում գտնվող 34 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 4200000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, համայնք Սարատակ, 6-րդ փողոց, 43 հասցեում գտնվող 224,9 քմ. բնակելի տուն, 37,2 քմ. օժտարկա, 24,8 քմ. թղթարան, 25,4 քմ. անասնաշենք և 0,113 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15640000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Արտաշատ ք., Դուրյան փողոց, 10 շենք, 24 հասցեում գտնվող 61,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15370000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Վ. Արտաշատ, Նար-Ռոսի փողոց, 6 հասցեում գտնվող 170 քմ. բնակելի տուն, 19,3 քմ. մարտա, 19,3 քմ. մարտա և 0,1488 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16650000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մայրաքաղաք-Սեբաստիա, Հաղթանակի 14-րդ փողոց, 9 հասցեում գտնվող 180,65 քմ. բնակելի տուն, 30,5 քմ. գույն (37,3 քմ. արտաքին մակերեսով), 5 քմ. /9 հա./ պարիսպ և 0,06566 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 50770000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Երկարո, Գյուր Ջուլիանի, 25-րդ փողոց, 60 հասցեում գտնվող 166,2 քմ. բնակելի տուն, 7,3 քմ. ինքնակամ կառուցված պարիսպ և 0,05 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 29100000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Թալին ք., Կոմիտասի փողոց, 1-ին կորնակց, 12 հասցեում գտնվող 186,14 քմ. բնակելի տուն, 82,5 քմ. օժտարկա շինություն, 20,42 քմ. խրճուղ, 5,3 քմ. օժտարկա շինություն և 0,101 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 22600000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, Չարենցավան ք., 8-րդ թաղամաս, 1 շենք, 7 հասցեում գտնվող 79,2 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12000000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Սպանդարյան փողոց, 16 շենք, 35 հասցեում գտնվող 75,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13900000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Կոճոճ թաղամաս, 30 հասցեում գտնվող 155,48 քմ. բնակելի տուն, 12,32 քմ. անասնաշենք, 4,48 քմ. սան մաս և 0,074 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 12900000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Կենտրոն թաղամաս, 85 շենք, 141 հասցեում գտնվող 55,57 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6800000 ՀՀ դրամ:

- Կոտայքի մարզ, համայնք Հրազդան ք., Վանատուր թաղամաս, 5 շենք, 22 հասցեում գտնվող 79,2 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 12900000 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Մյասնիկյան փողոց, 45 հասցեում գտնվող 134,04 քմ. բնակելի տուն, 4 քմ. կաթասպառում, 30,2 քմ. խրճուղակ, 37,2 քմ. ավտոտնակ և 0,0726 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15100000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Գրիբոյեդովի փողոց, 8 շենք, 18 հասցեում գտնվող 87,97 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6500000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Կոմունիստ փողոց, 26 հասցեում գտնվող 515,63 քմ. բնակելի տուն, 3,95 քմ. կաթասպառում և 0,0253 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 36600000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Սիսիան, Սիսիան ք., Շիրվանզարե փողոց, 4 շենք, 12 հասցեում գտնվող 54,45 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 8300000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, Կրասնայա փողոց, 4-րդ կորնակց, 7 շենք, 44 հասցեում գտնվող 78,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 34800000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., Եկեղեցու փողոց, 1/1 հասցեում գտնվող 55,91 քմ. առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ և 0,006 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 11400000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., Վրիսապուր մայրուղի, 12/1 հասցեում գտնվող 231,1 քմ. բնակելի տուն և 0,0214 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 17900000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Ստեփանավան ք., Խորենացու փողոց, 2-րդ կորնակց, 20 հասցեում գտնվող 90,3 քմ. բնակելի տուն, 8 քմ. բարկիք, 22,7 քմ. գույն և 0,0408 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 6300000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Աջափնյակ, Բաշինջաղյան 1 փողոց, 13 շենք, 55 հասցեում գտնվող 73,2 քմ. բնակարան և 0,06 քմ. ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 21100000 ՀՀ դրամ:

- Արարատի մարզ, համայնք Վեդի ք., Թումանյան փողոց, 3/1 հասցեում գտնվող 257,7 քմ. բնակելի տուն և 0,01233 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 31650000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, 21-րդ փողոց, 2 շենք, 12 հասցեում գտնվող 89,1 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 44250000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Զանաբեդ-Չեթյուն, Մ.Ալեքսիսյան 2-րդ փողոց, 17ա շենք, 5 հասցեում գտնվող 30,9 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 14100000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Զանաբեդ-Չեթյուն, Զանաբեդի 2-րդ փողոց, 61/3 հասցեում գտնվող 307,6 քմ. բնակելի տուն, 1,8 քմ. /3,6 հա./ 9 գծանետք՝ պարիսպ և 0,03149 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 61300000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Տաշիր, Տաշիր ք., Էրեբունու փողոց, 6 շենք, 1 հասցեում գտնվող 53,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9000000 ՀՀ դրամ:

- Լոռու մարզ, համայնք Վանաձոր ք., Ջ. Անդրանիկի փողոց, 101/1 շենք, 29 հասցեում գտնվող 82,32 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 10000000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Արաբկիր, 3. Եմինի փողոց, 4 շենք, 4 հասցեում գտնվող 51,3 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30600000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Մեղրի, Մեղրի ք., Մ. Օհանջանյան փողոց, 1-ին փակուղի, 21 հասցեում գտնվող 164,65 քմ. բնակելի տուն, 17,25 քմ. խրճուղ, 12,84 քմ. գույն և 0,03744 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 14360000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մայրաքաղաք-Սեբաստիա, Ջ. Անդրանիկի փողոց, 122 շենք, 36 հասցեում գտնվող 64,1 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22320000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մայրաքաղաք-Սեբաստիա, Ա. Բաբաջանյան փողոց, 39 շենք, 48 հասցեում գտնվող 48,4 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 16360000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Մայրաքաղաք-Սեբաստիա, Գ. Սիդաբեյյան փողոց, 72 շենք, 45 հասցեում գտնվող 83,7 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27930000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան ք., Բարաբաթում թաղամաս, 23 հասցեում գտնվող 137,1 քմ. բնակելի տուն, 26,4 քմ. ավտոտնակ, 25,6 քմ. անասնաշենք և 0,1378 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 15880000 ՀՀ դրամ:

- ք. Երեւան, Նոր-Նորք, Շուրաբի փողոց, 8 շենք, 13 հասցեում գտնվող 61,44 քմ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22520000 ՀՀ դրամ:

- Արագածոտնի մարզ, համայնք Կոջ, 16-րդ փողոց, 29 հասցեում գտնվող 239,5 քմ. բնակելի տուն, 22,5 քմ. ավտոտնակ, 14 ք

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐ ՅԵՌՈՒՄՏԱՍԵՐԻԱԼ

Գ. ԱՖՐԻԿՅԱՆԸ՝ ՆՈՐ ԿԵՐՊԱՐԻ ՄԱՍԻՆ

Ըստ ռուսով հեռուստահանրերին կհայցնվի նոր հեռուստատրիալ՝ «Մերը քակարգում»։ Հեռուստատրիալի գլխավոր դերակատար Գավիթ Աֆրիկյանը ArmLur.am-ի հետ զրույցում բնութագրել է իր կերտած կերպարը։ Գավիթ Աֆրիկյանի խոսքով՝ հեռուստատրիալում նկարահանվելու առաջարկը ստացել է սցենարիստ Անուշ Գեհրոյանի կողմից և համաձայնել է սիրով ընդունել, քանի որ արդեն իսկ փորձ ուներ Անուշի և դերասանական քիմի հետ աշխատելու։ «Առաջին անգամը չէ, որ համագործակցում եմ Վարսան Մաֆրազյանի և Անուշ Գեհրոյանի հետ, շատ լավ քիմ եմ, ջերմ ընկալելով միջավայր է սիրում նկարահանման հրադարակում, ինչը ես շատ եմ կարեւորում և դա էր հենց հիմնական դասճառը, որ ընդունեցի առաջարկը»։



Անդրադառնալով կերպարին՝ Գավիթը ընդգծում է, որ ամբողջապես չի կարող բացահայտել կերպարը։ «Միայն կարող եմ ասել որ, ես կյանքի տարբեր փուլերում եմ դժվարություններում կոփված անհատականություն է»։

«Չեմ ուզում կերպարս շատ բացահայտեմ հանդիսատեսի և ընթերցողների համար։ Ընդհանուր առմամբ կարող եմ ասել, որ ես մարդ է, ով չի ունեցել մանկություն, ես ոչ թե այդպես է ստացվել, այլ, ինչ-որ մարդիկ են պարզապես այդպես ցանկացել, որ ես չունենա մանկություն եւ զրկել եմ նրան ամեն ինչից, սկսած ընտանիքից, ընտանեկան ջերմությունից, որ յուրաքանչյուր երեխա կարող է ունենալ։ Իմ կերպարի հերոսը՝ լինելով շատ ուժեղ անձնավորություն, կարողացել է ինքնուրույն, թելուզ ջունենալով ոչինչ, ստեղծել կյանքում ինչ-որ բան», - նշեց դերասանը։ Առհասարակ սերիալում մի երեւոյթ կա. այդպես էլ ամբողջությամբ չես կարողաւում բացահայտել կերպարիդ խորությունը։

«Կերպարիդ հետ ծանոթանալը մի քիչ ժամանակ է պահանջում, որը պետք է տեղի ունենա։ Ինչպես է կավագործը ձեռքերով փուլ առ փուլ պատրաստում եւ ինչ-որ առարկայի վերածում, այնպես էլ կերպարի ձեւավորումն է։ Դերասանի մասնագիտությունը հենց դա է, որ կամաց-կամաց հղկում ես կերպարը», - նեզ հետ զրույցում հավելեց Գավիթ Աֆրիկյանը։

Նշեց, որ հեռուստատրիալում խաղում են Արմեն Մարությանը, Թեմիլնե Խաչատրյանը, Ելենա Վարդանյանը, Արման Խաչատրյանը, Ավի Ադամյանը, Դավիթ Աֆրիկյանը, Մարինկա Խաչատրյանը, Ալինա Ավետիսյանը, Մարգարետ Խաչատրյանը եւ այլ սիրված ու ճանաչված դերասաններ։

ԼԻՂԱ ԵՐԻԱԶՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՊԱՅՔԱՐԸ ԸՆԴՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ

Հայաստանի շախմատի տղամարդկանց եւ կանանց ընտրանիները շարունակում են պայքարը Համաշխարհային Օլիմպիադայում։ Հնդկաստանի Չենայ քաղաքում ընթացող Օլիմպիադայի 10-րդ տուրում Հայաստանի տղամարդկանց ընտրանին կմրցի Ադրբեջանի հավաքականի հետ։ Այժմ Արման Փաշիկյանի գլխավորած թիմը մրցաշարային աղյուսակում կիսում է 2-3-րդ տեղերը։ Մինչ այս Արման Փաշիկյանի գլխավորած ընտրանին տոնել է 7 հաղթանակ՝ առավելության հասնելով Մադագասկարի, Անդորայի, Եգիպտոսի, Ավստրիայի, Անգլիայի, Հնդկաստանի (առաջին եւ երկրորդ թիմեր) ընտրանիների նկատմամբ, իսկ ԱՄՆ-ի հետ հանդիպումն ավարտել էր ոչ-ոքի եւ զիջել է Ռուբեն Կասարյանի ընտրանուն։ Կանանց հավաքականը նույնպես ուժերը կջափի ադրբեջանցիների հետ։ 9-րդ տուրից հետո Հայաստանի կանանց թիմը մրցաշարային աղյուսակում 7-րդն է։ Նախորդ տուրերում ազգային թիմը 7 հաղթանակ էր տոնել (Բոտսվանա, Նորվեգիա, Իռլանդիա, Ինդոնեզիա, Անգլիա, Իսրայել, Ռումինիա) եւ զիջել էր Էստոնիային ու Վրաստանին։ Շախմատի Համաշխարհային Օլիմպիադան այս տարի անցկացվում է Հնդկաստանի Չենայ քաղաքում՝ հուլիսի 29-ից օգոստոսի 10-ը։

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Անգլիայի ջեմպիոն «Մանչեսթեր Սիթի» կատարողացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան մեկնաբանել է հաղթական մեկնարկը՝ Պրեմիեր լիգայում։ Առաջին տուրում մանչեսթերյան թիմը Լոնդոնում 2:0 հաշվով հաղթել էր «Վեստ Հեմին»՝ նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդի դուբլի շնորհիվ։ «Գերազանց հանդես եկանք։ Այն, ինչ չհաջողվեց անել «Լիվերպոլի» հետ Սուպերգավաթի խաղում, արեցինք այս անգամ։ Էրլինգ Հոլանդի վերաբերյալ ոչ մի կասկած չունեի։ Նա ամբողջ կյանքում գոլ է խփել, հիմա էլ մեր թիմին նոր որակ է հաղորդում։ Մենք կծգտենք նրան տալ ավելի շատ գոլ խփելու հնարավորություն։ Նա տաղանդավոր է եւ մտադիր է դառնալ հաջորդ Անրիի կամ Ռոնալդոն։ Բայց դրա համար ժամանակ է պետք, առջեւում երկար տարիների կարիերա է»,- Գվարդիոլայի խոսքը մեջբերում է BBC-ն։ Անգլիայի առաջնության երկրորդ տուրում «Մանչեսթեր Սիթին» օգոստոսի 13-ին կընդունի «Բորնմութին»։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (3)

Կորել է «Բարիստա Ակադեմիա» ՍՊԸ -ի կնիքը (ՀՎՀՀ՝ 02686244)։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

2022թ. օգոստոսի 2-ին Արարատի մարզի Մասիս քաղաքում «Օպել» մակնիշի տաքսու մեջ կորել է «Ռուսզագ» ՍՊ ընկերության որոշ հաշվապահական փաստաթղթեր/աշխատանքային պայմանագրեր, աշխատավարձի ցուցակներ, հարկային հաշիվներ, դրամարկղի գիրքը եւ այլն։ Գտնողին խնդրում ենք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝ /+37477/ 505-926, /+37443/098-523/։

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԿՎԵՐԱԿԱՆՔՆՎԻ՞ «ԲԱՆՎՈՐԻ ԱՐՁԱՆԸ»

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Հայաստանի ազգային դասկերասահ» ՊՈՍԿ-ի նախաձեռնությամբ կայացավ Բանվորի արձանը՝ Արա Հարությունյանի «Փառք աշխատանքին» կամ «Բանվորի արձանը» Բանդակի վերականգնման հարցերի վերաբերյալ մասնագիտական հանրային ֆննսարկում։



Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն Մարինա Հակոբյանը նշեց, որ հնարավոր է քանդակը լիարժեք վերականգնել կամ վանդակի դեմ պայքարի խորհրդանիշ դարձնելով՝ այն ժամանակակից արվեստի օբյեկտ դարձնել։ «Արձանը եղել է քաղաքի նշանակալից այս պարագայում հանրային քննարկումը շատ կարեւոր է։ Քննարկմանը մասնակցում են ճարտարապետներ, քանդակագործներ, իրենց խոսքն ամենաէականն է լինելու։ Քննարկվելու է, թե որտեղ եւ ինչ տեսքով կտեղադրվի քանդակը, ինչ լուծումներ կստանան։ Ուսումնասիրել ենք բոլոր հնարավոր տարբերակները։ Վերականգնման երկու տարբերակ կա՝ կամ լիարժեք վերականգնել, կամ վանդակի դեմ պայքարի խորհրդանիշ դարձնելով՝ քանդակի մասերը արվեստի ժամանակակից օբյեկտ դարձնել։ Եթե որոշվի քանդակն ամբողջությամբ վերականգնել, շատ խնդիրների ենք բախվելու։ Արձանի

մեծ մասն ուղղակի չկա, մի մասն էլ վատ է պահպանված», - նշեց նա։ Անվանի քանդակագործ Արա Հարությունյանի մտահղացմամբ՝ 1982 թվականին Երեւանի մետրոպոլիտենի «Գործարանային» կայարանի հարակից հրապարակում տեղադրվեց «Փառք աշխատանքին» կամ «Բանվորի արձանը», որը ներկայացնում էր աշխատավոր մարդուն եւ իրականում թեմատիկ աղբյուր չունեցող կոմունիստական գաղափարախոսության հետ։ Այն դեպի Արեւմտյան Հայաստան քայլող հայի կերպարն էր՝ հայացքն ուղղած դեպի Արարատ։

● Երեւանի Պետական կամերային թատրոնում օգոստոսի 17, 18, 27, 28, 31-ին տեղի կունենա «Ծննդյան վկայական» ներկայացումը։ Տոմսերի արժեքը՝ 1000, 2000, 3000, 4000, 5000 դրամ։



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Սովորող բնություններին չներկայացնալու դեպքում ինչպե՞ս կարող է հեռագայում այն վերահանձնել:

Չերմինե Խաչատրյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

4-րդ դասարանի՝ տարեկան 1-3 կամ գիտելիքների ստուգումից 1-3 միավոր գնահատված լինելու կամ գիտելիքների ստուգմանը չներկայանալու դեպքերում, եթե դրանց առավելագույն թիվը երեքն է, սովորողը հանձնում է վերաքննություն՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ն ընկած ժամանակահատվածում՝ հաստատության մեթոդավարներին կազմած առաջադրանքների հիման վրա:

9-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ ավարտական քննություններից 1-3 (բանավորի դեպքում) կամ 1-7 (գրավորի դեպքում) միավոր գնահատված լինելու կամ քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը չորսն է, վերաքննություն է հանձնում իր ուսհաստատությունում (բացառությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարի 3 մայիսի 2012թ. N 388-Ն հրամանով հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի» 20-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված քննական առարկաների) հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են Նշված կարգի 22-24-րդ և 33-րդ կետերի պահանջներին համապատասխան:

12-րդ դասարանի սովորողը տարեկան 1-3 (այդ թվում՝ քննական առարկաներից) կամ պետական ավարտական քննություններից 1-7 միավոր գնահատված լինելու կամ հունիս ամսին նախատեսված քննության օրը չներկայանալու դեպքում, եթե դրանց առավելագույն թիվը երեքն է, վերաքննություն է հանձնում իր ուսհաստատությունում՝ հուլիսի 2-8-ը կամ օգոստոսի 20-30-ը ընկած ժամանակահատվածում: Առաջադրանքները կազմվում են Նշված կարգի 32-35-րդ կետերի պահանջներին համապատասխան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

2021-2022 ուսումնական տարվա սովորողի բացակայությունների հաշվառման իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում և ամփոփվում է ուսումնական պարապմունքների ավարտից առավելագույնը 10 օր առաջ:

ԱՎԱՆՂՆԵՐ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրադեպական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:

Լիլիթ Մանուկյան (39 տարեկան, տնային տնտեսուհի)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչև 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաև մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաև այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը՝ անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Սյունիքի մարզում



Նախօրեին ավտոկար է տեղի ունեցել Սյունիքի մարզում: 46-ամյա Հայկ Քոչարյանը իր վարած Mercedes մակնիշի ավտոմեքենայով Բաղաբերդ թաղամասի վերջնամասում դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց, բախվել ծառին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ

հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը և ուղարկել Նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ \_\_\_\_\_
Ազգանուն՝ \_\_\_\_\_
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_
Բջջային ես/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 8.08.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶԵՆՈՒ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՐ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: